ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌԻ ԲԻՍՏ ԱՎԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Բիստ կամ Բուստ ավանը Գողթն գավառի նշանավոր բնակատեղիներից է, որը լական դեր է խաղացել գավառի XIII—XVIII դդ. մշակութային կյանքում։ Բիստը (այժմյան Նախիջևանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջանի համանուն գյուղը) փռված է Բստաձոր կոչվող բավական խոր ձորում, նրա ապառաժոտ լեզվակներից մեկի վրա, որի երկարությունը կազմում է ավելի քան 4 կմ։ Բիստի համայնապատկերին մի առանձին հմայք են հաղորդում նրա հյուսիսային կողմից հսող Գիլան, իսկ հարավային կողմից՝ Մեսրոպավան գետերը, որոնց ափերը երիզված են բարդիներով, հաստաբուն ընկուզենիներով, ուռենիներով։

Բիստի շրջակայքում, ուր մարդիկ բնակություն են հաստատել դեռևս մեր թվարկությունից առաջ, մինչև այժմ էլ տեսանելի են վաղեմի բերդ-ամրոցների, XII—XVII դդ. եկեղեցիների, գերեզմանատների, մատուռների, կամուրջների, ջրաղացների և այլ հուշարձանների ավերակները, որոնք վաղեմի Բիստի բուռն անցյալի խոսուն վկաներն են։

Ինչպես Գողթնի մյուս գյուղերի ու ավանների, այնպես էլ Բիստի պատմական անցյալի մասին սկզբնաղբյուրներում համառոտ տեղեկություններ են պահպանվել միայն։ Պատմական աղբյուրներում Բիստը առաջին անգամ հիշատակվում է XIII դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ, Բուստ անվանումով[1]։

Բիստը և նրա ճարտարապետական հուշարձանները այնուհետև հիշատակվում են այդտեղի գրչօջախներում, հատկապես Ս. Նշան կամ Կոպատափ անապատի գրչատնից մեզ հասած XIV—XVII դդ. ձեռագրերում։ Օրինակ, Բիստում գրված մի Ավետարանի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Բիստը Ս. Նշան անապատից բացի ունեցել է նաև Ս. Աստվածածին անունով վանք, ուր աաչատուր գրիչը 1439 թ. գրել է. «...սուրբ Աւետարանս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին, որ կոչի Բաստայ վանք»[2]։ Բիստում Ս. Աստվածածին վանքի և ապա Ս. Սարգիս եկեղեցու գոյությունը հաստատվում է նաև մեկ այլ ձեռագրի՝ Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 6531 Ավետարանի հաղորդած տեղեկություններով. «...գրեցաւ Աւետարան ձեռամբ հոգնամեղ և անարհեստ գրչի Գրիգոր աբեղայի ի Գողթան ի յանապատիս Բուստոյ, ընդ հովանեաւ ամենազաւր սուրբ Նշանիս, սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Սարգսիս... ի թվ ՋԼԸ (1439)... Եւ ետուն սուրբ Աւետարանս վախրմ և ընծայ սուրբ Նշանիս, սուրբ Աստուածածնիս Բստոյ վանացս»[3]։ 1495 թ. գրված ձեռագրում կարդում ենք. «...աւարտման սորա յերկիրս Գողթան, ի փոքր անապատս Փառակայ, որ կոչի Զորավանք, ընդ հովանեաւ սուրբ Գէորգիս... Անդի եղանք և եկաք ի սուրբ և փառաւոր վանքս Բուստոյ, և աստ գրեցաք զՔահանաթաղս, ի դրան սուրբ Աստուածածնիս և առ ոտս փառաւոր և սուրբ Նշանիս և ամենայն սրբոցս, ամէն»[4]։

Այսպիսով, Բիստի գրչատներում գրված ձեռագրերի վկայություններով պարզվում է, որ XIV—XV դդ. Բիստը հայտնի է եղել Ս. Նշան անապատով (որը առաջին անգամ հիշատակվում է դեռևս 1336 թ.), Ս. Աստվածածին վանքով և Ս. Սարգիս եկեղեցիով։ Այս ճարտարապետական հուշարձաններից այժմ Ս. Սարգիս եկեղեցին ավերակ է, որի հետքերը գտնվում են գյուղի հարավային կողմի բարձրադիր սարի գագաթին, իսկ Ս. Նշանը և Ս. Աստվածածինը կանգուն են։ Վերջինս՝ Ս. Աստվածածին վանքը, Մ. Փափազյանը, Ղ. Ալիշանը և նրանց կրկնելով՝ Ե. Լալայանն ու Հ. Ոսկյանը հիշատակել են Ս. Ստեփանոս անունով, հավանաբար այն պատճառով, որ տեղացիները վանքը կոչել են ս. Ստեփանոսի անվամբ։ Բիստեցիները այժմյան կանգուն Ս. Նշանը ևս իր անունով չեն կոչում, այլ վերանվանել են Կարմիր

---

[1] «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն նահանգին Սիսական», Մոսկվա, 1861, էջ 223, 378, նաև Բստեձոր՝ էջ 223, 228։ Ի միջի այլոց, Օրբելյանի պատմության ՀԳ գլխում բերված 15 գավառների հարկատու գյուղերի առեղծվածային ցուցակը, ըստ ուսումնասիրողների, կազմված է հին վարչական բաժանման հիման վրա, «ոչ ուշ քան X դարը» (տե՛ս Ս. Հ ա կ ո բ յ ա ն, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, Երևան, 1957, էջ 323։ Հ. Ո ւ ք մ ա գ յ ա ն, Սյունիքը IX—X դարերում, Երևան, 1958, էջ 234)։ Հետևապես Բիստը պետք է համարել X դարից հիշատակվող բնակատեղի։

[2] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Գ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 391։

[3] Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6531, էջ 262ա, 263բ։

[4] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Գ, էջ 215։

վանք։ Ամենայն հավանականությամբ Բիստի հուշարձանների պատմական անունները վերանվանել են 1827 թ. Պարսկաստանից ներգաղթած և Օրդուբադի շրջանում, այդ թվում նաև Բիստում բնակություն հաստատած հայերը։ Բացի այդ, ինչպես վերևում տեսանք, ձեռագրերում Բիստի հուշարձանների թվում Ս. Ստեփանոս անունը չկար։ Ձեռագրական աղբյուրներում



Նկ. 1

Ս. Ստեփանոս անվանը հանդիպում ենք միայն 1687 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում՝ եկեղեցի անվանումով։ Այդ Ավետարանի ստացող պարոն Նուրին այն «...եղ յիշատակ ի գեօղն Պուստ. ի դուռն սբ Ստեփանոս եկեղեցւոյն։ Ի վայելումն մանկանց նորոյ սիոնի»[5]։ Մեր կարծիքով այս Ս. Ստեփանոսը Բիստից 2 կմ արևելք գտնվող Այահիի (Աղահեցիկ, Ողոհի) եկեղեցին է, իսկ վերը նշված հեղինակների մոտ արձանագրված Ս. Ստեփանոս վանքը պետք է որ ձեռագրական աղբյուրներում հիշվող Ս. Աստվածածինը լինի։

Բիստի Ս. Աստվածածին վանքը (նկ. 1) կառուցված է գյուղի կենտրոնում, նրա արևելյան թաղամասի բարձրադիր վայրում։ Իր տեղի և մեծության շնորհիվ այն գերիշխող դիրք ունի գյուղի համայնապատկերում։ XVIII դարում Աբրահամ կաթողիկոս Կրետացին այցելելով Բիստ, այս շինությունը որակավորել է որպես «պատուական մեծ եկեղեցի»[6]։ Այն եռանավ բազիլիկայի հորինվածք ունի (նկ. 2), կառուցված է սրբատաշ բազալտից և կարմիր քարից։ Այժմյան վիճակով վնասված են եկեղեցու հյուսիս-արևելյան որմի անկյունային մասի վերին հատվածի մի քանի երեսապատող շարքերը և որմերի տարբեր մասերում կան վտանգավոր ճեղքեր։ Դժբախտաբար Ս. Աստվածածնի հիմնման և վերակառուցումների մասին տեղեկություններ չեն պահպանվել։

Այժմյան շենքը հիմնովին նորոգվել է XVII դարում։ Ս. Աստվածածնի հորինվածքը (բաղկացած է արևելյան կողմում յոթանիստ արսիդից, երկհարկանի գույգ ավանդատներից և ընդարձակ եռանավ դահլիճից) պարփակված է միասնական ուղղանկյունի ծավալի մեջ և ծածկված է արտաքինից երկթեք տանիքով։ Եկեղեցու միակ մուտքը բացված է արևմտյան ճակատում և երիզված է քանդակազարդ բարձր կամարաշարով։ Բարավորից վերև, խորացող կամարի տակ տեղադրված է XVII դարի քան-

5 «Յուցակ հայերեն ձեռագրաց Նոր-Բայազետի», կազմեց Հ. Աճառյան, Վիեննա, 1924, էջ 22։

6 «Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին», Վաղարշապատ, 1870, էջ 78։

զակազարդ խաչքար։ Եկեղեցին ինչպես ներսից, այնպես էլ արտաքինից փաստորեն զուրկ է հարդարանքից։ Վերանորոգումների ժամանակ XVII դարի մի փոքրիկ քանդակազարդ խաչքար էլ տեղադրված է եկեղեցու արևելյան ճակատի վերևում։

Ս. Աստվածածին վանքի եկեղեցու բարձր և ընդարձակ սրահը չորս խաչաձև կտրվածքով հաստահեղույս (1,57 մ) մույթերով և կամարաշարով բաժանված է երկու փոքր և մեկ մեծ նավի։ Մ. Փափազյանը սխալմամբ նշել է, որ այս «եկեղեցին, ներքին կողմը 6 առանձնակի հաստ ու բարձր սիներով...»7 է։ Սրահը ունի 15,64 մ լայնություն և 22,5 մ երկարություն, ընդ որում միջին նավի թաղի լայնությունը կազմում է 7 մ, իսկ կամարների թռիչքը երկայնական ուղղությամբ՝ 7,60 մ։ Բիստի Ս. Աստվածածին եկեղեցին թաղի և կամարների այսպիսի մեծ թռիչքով առանձնանում է ուշ միջնադարի հայկական նույնատիպ հուշարձանների շարքում։ Օրինակ, Սյունիքի XVII—XVIII դդ. եռանավ բազիլիկաներում թաղերը հիմնականում ունեն 4—5 մ թռիչքներ, ուր միայն Հալիձորի բերդի եկեղեցին ունի 6,15 մ հասնող թռիչք8։ Եկեղեցու սրահի որմերում կան բավական լայն բացվածքներով 14 որմնախորշեր։ Ծածկում՝ մեծ նավի թաղի մեջ, բացված է շրջանաձև երդիկ, որի վրա ժամանակին կառուցված է եղել (այժմ ավերված) զանգակատան ոտոնդան։

Բիստի Ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետական հորինվածքում հետաքրքիր է նրա բեմի աբսիդը, որն ունի յոթանիստ կազմություն։ Ընդարձակ և բարձր այս աբսիդի բոլոր նիստերում արված են լայն բացվածքներով խորշեր։ Միջին խորշի վերևում կա պատուհան, որը և լուսավորում է աբսիդը։ Բազմանիստ աբսիդների հիմնականում հանդիպում ենք Պարսկաստանի հայկական ճարտարապետական հուշարձանների հորինվածքներում, հատկապես նշանավոր գաղթօջախ Նոր-Ջուղայում (XVII դար)9։ Բազմանիստ աբսիդներ կիրառվել են նաև Գողթն, Երնջակ և Նախիջևան գավառներում, ուր համարյա բոլոր նշանավոր ճարտարապետական հուշարձաններն ունեն այդ տիպի աբսիդներ10։

Բիստի Ս. Աստվածածին եկեղեցու բեմը իր երկու կողմերում ունի համարյա քառակուսի հատակագծերով երկհարկանի ավանդատներ, որոնց առաջին հարկերի որմնախորշերը ա-



Նկ. 2

ռնեն լայն ու բարձր բացվածքներ և լուսավորվում են արևելյան որմի պատուհաններով։ Եկեղեցու աբսիդի և ավանդատների, ինչպես նաև նավերի թաղերի միջև, ծածկի տակ բողնված են թունելանման թաքստոցներ, որոնք միջանցքների պես ձգվում են կառույցի երկարությամբ՝ արևելք-արևմուտք։ Եկեղեցու այդ թաքստոցների մուտքերը բացված են առաջին հարկի ավանդատների որմերում։ Հյուսիսային ավանդատան թաքստոցների մուտքը բացված է նրա առաջին հարկի հարավային որմի հարավ-

7 Մ. Փափազյան, Հնությունք վանորեից. Գողթան գավառ, լուսանկարչական ալբոմ, Վաղարշապատ, 1891, № 296։

8 Մ. Հասրաթյան, Սյունիքի XVII—XVIII դարերի ճարտարապետական համալիրները, Երևան, 1973, էջ 153։

9 Մ. Հասրաթյան, Աստապատի վանքի ճարտարապետական համալիրը, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 131—132։

10 Մեր «Շոռոթի և Դաղի եկեղեցական ճարտարապետական հուշարձանները» հոդվածում («Էջմիածին», 1977, մայիս, էջ 46—57) Շոռոթի Ս. Լուսավորիչ վանքի եկեղեցու հնգանիստ աբսիդը և Դաղի Ս. Գրիգոր վանքի եկեղեցու յոթանիստ աբսիդը հատակագծերում սխալմամբ կիսաշրջանաձև ենք արտահայտել։

արևելյան անկյունային որմնախորշում, իսկ հարավային ավանդատանը՝ հյուսիս-արևելյան անկյունային որմնախորշում, որոնք փակվել են սալերով և միանգամայն աննկատ դարձրել թաքստոցների մուտքերը։ Այդ մուտքերից քարե աստիճաններով նախ բարձրանում են ավանդատների երկրորդ հարկերի անմիջապես ետին մասերում հյուսիս-հարավ առանցքով կառուցված 3.30 մ×1.60 մ թաքստոց-սենյակները, որոնք օդ ու լուսավորություն են ստանում արևելյան անկյունային որմնախորշում։

Նկ. 3

վելյան որմում քողարկված և արտաքինից աստղաձև փոքրիկ լուսամուտներից։ Այնուհետև այդ սենյակ-թաքստոցներից բարձրանում են աբսիդի ծածկի ուղղությամբ և թունելանման միջանցքներով մտնում սրահի ծածկի տակ թողնված թաքստոցները։

Ս. Աստվածածին եկեղեցու այս թաքստոցները կոնստրուկտիվ նշանակությունից բացի մեծ դեր են խաղացել հատկապես որպես վանքի լրացուցիչ պահեստներ, ապաստարաններ վանական ունեցվածքի, ձեռագրերը և այլն պատսպարելու համար։ Պետք է նշել, որ նման թաքստոցներ ունեն Գողթնի ու Երնջակի գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, օրինակ, Ագուլիսի, Ցղնայի, Փառակայի, Շոռոթի, Գադի, Ապրակունիսի, Փարաղաշտի և այլ ավանների ու գյուղերի հուշարձանները։

Ս. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատին կցված է նրա գավիթը, որը բավական լավ է պահպանվել և գրավում է եկեղեցու ընդլայնական երկարությունից փոքր տարածություն։ Մ. Փափազյանը սխալմամբ նշել է, որ այս եկեղեցու «գավիթը խոնարհված է բոլորովին...»[11]։ Այժմյան գավիթի շինության ուսումնասիրությունը, տարեց բիստեցիների հետ ունեցած մեր զրույցներից, ինչպես նաև Մ. Փափազյանի այրոմում, Ղ. Ալիշանի «Սիսականում» և ապա Ե. Լալայանի «Գողթնում» տպագրված այս եկեղեցու լուսանկարներից[12] պարզ երևում է, որ նրա գավիթը կանգուն է եղել նաև XIX դարի վերջին։ Ս. Աստվածածին եկեղեցու գավիթը անդմբեթ ուղղանկյուն կառուցված է, որի հյուսիսային և հարավային ճակատները խուլ պատեր են։ Գավիթի արևմտյան ճակատը իրենից ներկայացնում է կամարաշար՝ երեք բացվածքներով, որոնց մույթերին համապատասխան, եկեղեցու արևմտյան որմին կից կառուցվել են որմնամույթեր։ Գավիթի և եկեղեցու որմնամույթերի միջև ձգվող կամարներով գավիթը բաժանված է ընդլայնական երեք հատվածի։ Այժմ եկեղեցին որպես պահեստ օգտագործելու նպատակով գավիթի արևմտյան ճակատի երեք թաղերի բացվածքներն էլ փակվել են շարվածքով։

Ս. Աստվածածին եկեղեցու և գավիթի պատերի միջև կոնստրուկտիվ կապի բացակայությունը ցույց է տալիս, որ գավիթը կառուցվել է հետագայում։ Գավիթի աջ կողմի պատի մեջ, մի քարի վրա արձանագրված է. «Ի թվին ՌՃԼԶ (1687). սպասաւոր բանին տ[ե]ր Ալեքսան զվէմս փոքրիկ յիշատակ իւրեան»։

Այս արձանագրությունից ներքև եղել է նաև մեկ այլ ընդարձակ արձանագրություն՝ գրված սև ներկով, որը այժմ քայքայված է։ Ժամանակին այն ընդօրինակել է Ե. Լալայանը. «Ռ թվականին հայկազնց Ռ երորդ Ճ երորդ Լ երորդ ութեակ թվի ի ...ով ընթերցողք ասացէք մէկ ողորմի մեր գեղացոց փոքր եւ մեծ. եւս արաւել Ապրահամ ու Երեմիան, որք զտուրս ետուն դումարմբութբ եիլի. հոգում աւուր տն ի սմա. Զենմա մեղց նոցին թողութիւն լինի ամէն. եղիցի, եղիցի»[13]։

Առաջին արձանագրության մեջ հիշատակվող տեր Ալեքսանը, ըստ Ագուլեցու[14], XVII դարի 70-ական թթ. Բիստի Ս. Նշան վանքի առաջնորդ Ալեքսան Բստեցի վարդապետն է։

Մ. Փափազյանի հաղորդած տվյալների համաձայն այս վանքը, «...որ տեղ-տեղ քայքայված էր, 1877 թվին գյուղացիք նորոգում են յուրյանց համար իրր աղոթատեղի»[15]։ Այս նորոգման ժամանակ էլ եկեղեցու ինտերյերը նկարազարդվել է։ Ներկայումս այդ որմնանկարների միակ հետքերը պահպանվել են ավագ

---

11 Մ. Փափազյան, նշվ. աշխ., № 296։

12 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 345, նկ. 106։ Ե. Լալայան, Գողթն կամ Օրդուրադի կամ Վերին-Ագուլիսի ոստիկանական շրջան (առանձնատիպ), Թիֆլիս, 1904, էջ 89։

13 Ե. Լալայան, Գողթն..., էջ 89։

14 «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», Երևան, 1938, էջ 95։

15 Մ. Փափազյան, նշվ. աշխ., № 296։

աբսիդի որմնախորշերից վեր ընկած հատվածներում։

Բիստի XIV—XVII դդ. մշակութային անցյալում բացառիկ տեղ ունի Ս. Նշան կամ Կոպատափ անապատ-վանքը, որի եկեղեցին այժմ էլ կանգուն է և լավ է պահպանված (նկ. 3)։ XVII դարում այն կարմիր քարով հիմնովին կառուցված լինելու պատճառով բիստեցիների կողմից անվանվել և այժմ էլ կոչվում է Կարմիր վանք։ Ս. Նշանի համալիրը, որը գտնվում է Դիլան գետի աջ կողմում, Բիստից մոտ մեկ կիլոմետր դեպի հյուսիս, տեղադրված է Բստաձորի հյուսիսային բարձրագագաթ սարերից դեպի վար իջնող բավական ընդարձակ դարավանդներից մեկի հարթության վրա։ Համալիրի շուրջը՝ հիմնականում նրա հյուսիս-արևմտյան և հարավային կողմի հարթություններում տարածված են եղել (այժմ էլ տեսանելի) նրա մշակովի այգիները, բանջարանոցները, որոնք ոռոգվել են անապատի հյուսիս-արևելյան կողմի փոքրիկ ձորակից հոսող հորդահոս աղբյուրների ջրով։ Անապատի այգիների մի մասը, թեքաղիր վայրում տեղադրված լինելու հետևանքով, ունի պատնեշ-պատեր։

Բարեբախտաբար Ս. Նշան կամ Կոպատափ անապատից մեզ հասած մի քանի ձեռագրերում և XVII—XVIII դդ. որոշ պատմական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել այս հուշարձանի տեղադրության, նրա մշակութային անցյալի և այլ հարցերի մասին, որոնք նպաստում են հուշարձանի պատմության ուսումնասիրմանը։ Ըստ ավանդության Ս. Նշան անապատը հիմնվել է դեռևս V դարում։ «Այս այն սուրբ Նշանն է, որ Քրիստոս աշակերտաց ոտնլվաց...»,— գրում է Ագուլեցին[16]։ Սակայն Ս. Նշան անապատի մասին առաջին տեղեկությանը հանդիպում ենք 1336 թ. այդտեղ գրված Ավետարանի հիշատակարանում, որը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում. «...գրեցաւ սուրբ աւետարանս բժիշկ հոգւոյ և մարմնոյ ձեռամբ յոգնամեղ և փղուն գրչի Թումայի Արճիշեցւոյ, ի յերկրիս Գողթան, ի յանապատիս, որոյ անուն Կոպատափ կոչի, որ յանդիման գեղին Բստոյ... ի թուականիս Հայոց ՉՁԵ (1336)...»[17]։ Ս. Նշան անապատը հիշվում է նաև այդտեղ 1489 թ. գրված Ավետարանի հիշատակարանում. «ի գաւառիս Գողթան ի յանապատիս Բուստոյ...»[18]։

Այնուհետև XVII դարի ձեռագրերում, ինչպես նաև հեղինակների մոտ Ս. Նշանը կոչվել է Բիստի Ս. Նշան վանք։ Օրինակ, Ս. Նշան եկեղեցուց պահպանված մի վակասի (որը գործված է կարմիր մետաքսից, ֆոնի վրա ունի խաչապատկեր, պտղավորված և ծաղկած ծառեր, բուսական զարդանախշեր) արձանագրությունում նշված է. «Յ(ի)շ(ա)տ(ա)կ է վակասս Վարդազարին ի դ(ու)ռն Պիստոյ ս(ուր)բ Նշանին. թվ(ի)ն ՌՃԺԶ ինն»[19]։

Զաքարիա Ագուլեցին գրում է. «Թվին ՌՃԺԹ (1670) յուլիսի ԻԳ ումն Ագուլիս, որ ես Զաքարիայ մեր խիզանով, այլ ուրիշի խիզան, շատ ուխտավոր, գնացինք Բստու վանքն սուրբ Նշան ուխտ»[20]։ 1689 թ. գրիչ Ստեփանոս աբեղիկը այդ եկեղեցում իր գրած ճաշոցի հիշատակարանում ևս այն անվանել է Բուստա վանք»[21]։ Իսկ XVIII դարում Ս. Նշան այցելած Աբրահամ կաթողիկոս Կրետացին, որը մի առանձին հիացմունքով է խոսում նրա մասին, գրել է. «...ելայ ի վանքն աղաւնանման՝ ադինասարս՝ ի վայելուչ բարձրանիստ տեղի. զի պարտիզօք ջրարբի, և բարեբեր հողով, և պարզ առողջարար օդով՝ զուարճացաւ սիրտ իմ, մոռանալով զաշխատութիւնս ճանապարհի... և միաբանքն սիրով և հնազանդ, և մնացի Բ. օր»[22]։

Այսպիսով պարզվում է, որ Ս. Նշանը սկզբում հանդիսացել է անապատ, որն ըստ ձեռագրական և պատմական աղբյուրների տեղեկությունների համապատասխանում է այժմյան Ս. Նշան կամ բիստեցիների վերանվանակոչած Կարմիր վանքին։ Դժբախտաբար Ս. Նշան անապատի վաղ շրջանի կյանքի մասին կցկտուր տեղեկություններ են հայտնի միայն։ Իսկ նրա վանական միաբանությունը, Աբրահամ Կրետացու վկայությամբ, XVIII դարում գործում էր «սիրով և հնազանդ»։

Ս. Նշան վանքի եկեղեցին կառուցված է կարմրերանգ (տուֆ) սրբատաշ քարերից և բազալտից։ Ուղղանկյուն հատակագծով այդ եկեղեցին (նկ. 4) մեկ զույգ մույթերով եռանավ բազիլիկա է, հնգանիստ աբսիդով, երկհարկանի զույգ ավանդատներով և ծածկված է երկթեք տանիքով։ Ժամանակին եկեղեցին և նրա հարավային ճակատի առջևի, ինչպես նաև արևմտյան կողմում կառուցված խցերն ու այլ

16 Զաքարիա Ագուլեցի, էջ 95։ Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 729։

17 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 6275, էջ 267բ։

18 Նույն տեղում, ձեռ. № 6531, էջ 262ա։

19 Հայերեն արձանագրությամբ առարկաներ, պրակ 1, աշխատասիրությամբ Ե. Մուշեղյանի, Երևան, 1964, էջ 94։

20 Զաքարիա Ագուլեցի, էջ 95։

21 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7481։

22 Աբրահամ Կրետացի, նշվ. աշխ., էջ 78։

տնտեսական շինությունները առնված են եղել քառանկյունի պարսպի մեջ։ Ինչպես պարիսպը, այնպես էլ համալիրի մյուս շինությունները այժմ ավերակ են։ Եկեղեցու հարավային ճակատին կցված գավիթի առջև եղել է նաև գերեզմանատուն, որից այժմ XVII դարին վերաբերող 3—4 տապանաքարեր են մնում միայն։



Նկ. 4

Մի քանի կիսավեր շինություններ են տեսանելի նաև եկեղեցու հարավային մասում, որոնք ըստ հատակագծերի ուղղանկյունի շինություններ են։

Ներկայումս Ս. Նշան համալիրից միակ կանգուն հուշարձանը նրա եկեղեցին ու գավիթն են։ Եկեղեցու չափերն են 13,24 մ×9,32 մ։ Ս. Նշանի սրահը հատակագծում համարյա քառակուսի է (9,02 մ×9,32 մ)։ Սրահի կամարները հանգչում են քառակուսի կտրվածքով երկու մույթերի (0,95 մ) և եկեղեցու արևմտյան պատի ու բեմի անկյունների վրա։

Ս. Նշանի հնգանիստ արսիդում բացված են հինգ, ավանդատներում՝ երկուական, իսկ սրահում՝ ութ որմնախորշեր։ Արսիդի և ավանդատների լուսավորությունը իրականացված է արևելյան որմերի մեկական լուսամուտներով, իսկ սրահինը՝ հարավային որմի երկու և արևմտյան ճակատի երեք լուսամուտներով, ինչպես նաև միջին նավի ծածկում թողնված երդիկով։ Եկեղեցին հյուսիսային կողմում լուսամուտներ չունի։

Ս. Նշանի ավանդատները հատակագծում ուղղանկյունի են։ Եթե Սյունիքի, Գողթնի, Երընջակի և առհասարակ պատմական Հայաստանի այլ գավառների հուշարձանների թաքստոցների մուտքերը սովորաբար թողնված են աբսիդների, ավանդատների պատերի տարբեր մասերում և որմնախորշերից, ապա Ս. Նշանի թաքստոցների մուտքերը բացված են առաջին հարկերի ավանդատների արևելյան լուսամուտների վերևի մասը ծածկող հատվածում, որի համար էլ այդ լուսամուտների ներսի մասի բացվածքները պատի հյուսիսային և հարավային երեսների վրա, ինչպես նաև բարձրությամբ, ունեն մեծ չափեր։ Մուտքերի այդ տեղադրությունը և շարվածքի հետ նույնանման սալերով փակվելը միանգամայն աննկատ են դարձնում թաքստոցների գոյությունը։

Ս. Նշանի միակ մուտքը, տեղանքի թելադրանքով, գտնվում է հարավային ճակատում, որի ուղղանկյուն բացվածքը երիզված է բարձր և քանդակազարդ կամարով։ Մուտքի բարավորի վրա հինգ տողով քանդակված է եկեղեցու շինարարական արձանագրությունը (տպագրվում է առաջին անգամ).

1 Շինեցա(ւ) ս(ուր)բ Եկ(ե)ղ(ե)ցիս ի Թվին
2 ՌԾԺԷ (1668) ումն ի Թ(ա)գ(ա)ւ(ո)ր(ո)ւթե(ան)
3 շահ Իսմայէլ(ի)ն եւ Հ(ա)յր(ա)պ(ե)տու
4 Թե(ան) տ(եառ)ն Յակորայ եւ յ(ա)ռ(ա)ջնորդու
5 Թե(ան) տ(եառ)ն Պ(ե)տր(ոսի) զառա(ջնորդութեամբ). յ(ի)շ(ե)ց(ե)ք ի Ք(րիստո)ս(այ).

Ինչպես վկայում է այս արձանագրությունը, եկեղեցին կառուցվել է 1668 թ.՝ Ս. Նշանի առաջնորդ տեր Պետրոսի վերահսկողությամբ։ Մի քանի արձանագիր խաչքարեր կառուցման ժամանակ հագցվել են որմերի տարբեր մասերում։ Օրինակ, XV դարի մի խաչքար տեղադրված է աբսիդի հարավային առաջին որմնախորշում, մեկ այլ արձանագիր խաչքար՝ հյուսիսային ավանդատան լուսամուտի շարվածքում և այլ մասերում։ Եկեղեցու ներսում ընկած խաչքարերից մեկն ունի այս արձանագրությունը (տպագրվում է առաջին անգամ).

1 Ս(ուր)բ խաչս յիշ[այ](տա)
2 կ է Պողոսին
3 ե(ւ) ո(ր)դուն ե[ւ]
4 կ(ո)ղ(ակց)ին Թվ
5 [ռ]ղ (1641)

Ս. Նշանի գավիթը հատակագծում ուղղանկյունի է, կառուցված է սրբատաշ բազալտից և տեղական կարմիր քարից։ Նրա հարավային ճակատը իրենից ներկայացնում է երեք բացվածքներով կամարաշար։ Գավիթի և եկեղեցու պատերի շարվածքի կոնստրուկտիվ կապերի առկայությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ գավիթը կառուցվել է եկեղեցու հետ միաժամանակ (1668 թ.)։

Պատմական և ձեռագրական աղբյուրներում Ս. Նշանի և նրա շինությունների վերանորոգումների մասին այլ տեղեկություններ չկան։ Մ. Փափազյանը և Ե. Լալայանը նշում են, որ

այն Բիստի բնակիչների կողմից, հավանորեն վերջին անգամ, մասնակիորեն վերանորոգվել է նաև XIX դարի վերջերին[23]։

Բիստի ճարտարապետական հուշարձանների շարքում հիշարժան են նաև նրա XVI—XVII դդ. մինչև օրս էլ գործող կամուրջները։

Նկ. 5

Բիստի հյուսիսային կողմի ձորից հոսող Գիլան գետի վրա կառուցված կամրջի (նկ. 5) խելները դրված են երկու ափերի ժայռերի վրա։ Այս միաթռիչք կամուրջը շինված է խնամքով, մաքուր տաշած և կիսամշակ բազալտի քարերով և կրաշաղախով։ Բիստի այս կամուրջը հնուց ի վեր գյուղը կապել է Ս. Նշան անապատի, հարևան Ալահին (Աղահեցիկ, Ողոհի) գյուղի և միջնադարյան նշանավոր ավան ու գյուղաքաղաք Շոռոթի հետ։

Այս կամրջի կառուցման ժամանակը հայտնի չէ, նրա շինարարական արվեստից դատելով կարելի է եզրակացնել, որ դա եղել է մոտավորապես XVI դարի կեսերից հետո։

Բիստի մյուս կամուրջը կառուցված է գյուղի հարավային կողմի ձորից հոսող Մեսրոպավան գետի վրա (նկ. 6)։ Այն ևս իրենից ներկայացնում է միաթռիչք մի կառուցվածք, իրականացված մաքուր տաշած քարերով և կրաշաղախով, որի խելերը հանգչում են գետի

Նկ. 5

երկկողմյա ժայռերի վրա։ Կամուրջն իր հուսալիությամբ և անհրաժեշտ լայնությամբ մինչև օրս էլ Բիստ մուտք գործող, ժամանակակից մարդատար ու բեռնատար տրանսպորտի միակ ճանապարհն է հանդիսանում։

Այս կամրջի կառուցման ժամանակի մասին տեղեկություններ նույնպես չկան։ Հավանաբար այն կառուցվել է XVII դարի կեսերին։ Կամրջի հարավային խելի բարձունքում, կամարի ուղղությամբ, նրա արևմտյան երեսին տեղադրված է մի քար, որի վրա կա «1869» միակ արձանագրությունը։ Սա ամենայն հավանականությամբ կամրջի վերանորոգման տարեթիվն է։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

23 Մ. Փափազյան, նշվ. աշխ., № 296, Ե. Լալայան, Գողթն..., էջ 90։